

ունեցող»։ լաւ է թայց աւելի որոշ պիտի ըլլար ըսելն «երեք անձն ունեցող»։

ՓԶ. — Ժամանկ (Եջ 92)։

Այս բարին վրայ երկարորէն խօսուած է և զրուած։ Դուրեան Սրբազնի և Պ. Աճառեանի տուած մեկնութիւնը՝ միակ պարզ, խելացի և ճիշտ է. ժամանկ բառ մը մեր լեզուին մէջ զոյսութիւն չունի. բառը «ժամանակ» է, զոր օրինակող սխալ զրեր է ան մասնիկը մոռնալով։

Այսպիսի սխալներ սովորական են ձեւ, ուազրաց մէջ այսպէս օր. ձեռագիր մը կը զրէ. «անգաւաւսի» և անգօստի, «յեկեցի» «սարկաւուն» ևն։ Ողջմոռւթիւնը և աեղւոյն իմաստը բնական է չեն ներեր մեզ ասոնց նոր բառ համարիլ կուրօրէն, որով հարկ է պրազրենց զրչին վրիպակն է ըստնք. «Անգօստ», «Եթէկեղի», «Սարկաւագունս»։

Հ. Գրուզոր Սարգսոս  
(Շարութակելի)



## ԱՐԵՒԵԼՔ ԵՒ ԳՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԸ



Ի՞նչ որ արուեստի վերաբերեալ առարկայ ցուցադրում է Հոռմ, մեր Բուականի առաջն զարդէն սկսած, նաև կրում է Աղքասանդրեան դրոշը։ Յօթներորդ զարու կէսին, թափտենական բաղացը կիսով չափ աւելի բիւզանդական զարձած էր, ոչ իւր շինուածապետերու, ոչ իւր վարձկան նախշըքեաներու մորթից անցել էր երեք քրիստոնէական արուեստ մը հանճարաստեղծել։

Պաշտօնական զիտութիւնն փորձեց եղածն վերագրել քայրայուած Յունաստանին, այն ամէնք ինչ որ ամբարուած էր պարսպաւեր Հոռմում։ Սակայն յունական ճարտարապետութեան համակիրներ, բոլոր իրենց նախաճենուութեամբ, աւելի յառաջադիմութիւն մի պիտի չկարենային ցուցադրել քան փայտածածք բազիլիկաներու տիպարը։

Մէջրկրականի յունական ոճի փոխանակութիւնը, Սիւրիոյ և Հայկական երկիրների զմբեթաւոր ճարտարապետութեան հետ, անդրագարձնում է Սարիչկովսկին, կարելի եղած չէ հասկանալի մինել առա-

ջիններում, բայց եթէ երբ արդէն վերջինս վաղուց իւր կատարելութեան հասել էր։

Այն ժամանակներում երբ Հոռմայեցիք տարում էին յօշտուելու կրկէսին մէջ, կամ ապաստան էին վնասում Գետանա- զամարանների տղմոտ և մուլթ նկուղների մէջ, անդին Արևելքում քրիստոնէական հասարակութիւններ ազատարար գարզա- նում էին Պարսից պետութեան սահման- ների մէջ։ Լատիոնի սիրահար պատմիչներն, իրենց զիրենց կարծում են ափեզեցիք կեղրոնումը լինել։ Նորա պարզմու- թեամբ տգէտ մնացել են կամ մոռացութեան տուել, կամ կամակորութեամբ կեղծած որ նոր հաւատըը Արևմետացից անհամե- մատ արագութեամբ տարածուեց Արևելք- ում։ այն աեղծագործելու կենառնակ ժողովուրդների մէջ։

Կան ձեռագիրներ որ ցոյց են տալիս քրիստոնէական շինութիւնների գոյութիւնը Աստիքանում, անդր քան Տիգրիսը, երկրորդ զարից սկսած, Սասանեանց հաւածանը այն ատեն միայն սկսուեց Հայ- յաստանի մէջ, երբ քրիստոնէութիւնն պետական կրօնը հոչակուեց, և ապա անցաւ-

Հոռմէական բաժան կայսերութեան մէջ:

Յովսէիք Ստրիչկովսկին, ըրիստոնէական ճարտարապետութեան անվիճելի ախույանն, իւր վերջին երկասիրութեամբն ապացուցեց, որ թէ՝ ճարտարապետութեան նախնական գիտութիւնն, ինչպէս նաև երգի և արարողութեանց սկզբնաւրութիւնն, յառաջաւոր Ասիայէն եկած են, ասինցն զմբեթաւոր շինութեանց ծնունդի երկրից: Լատին եկեղեցին որոցածե կամարն փոխ առած է Միջազգեցէն: Իսկ ինչ որ վերաբերում է զուտ կրօնական հիմնական շինութեան, անոր արտականոն խիզախ թոշչն, զրաւիչ բանաստեղծութիւնն՝ յանդուզն Հայաստանին պատկանում է, իրանի հարկատութիւն(?) յորմէ նա ազդուեր է Քաղաքիթն ժայթքում է թըմբուկէն վեր. խաչածե պատուանանին կամ թիւնու վերայ հաստատուած: Ստրիչկովսկին երեսուն տարիներու հետազօտութիւններէ և խանդավառ համեմատութիւններէ յետոյ, ի վիճակի եղաւ գտնելու ըրիստոնէական արուեստի որորանը. ՄԻԶԱԳԵՑՔ-ՀԱՅԱՍՏԱՆ:

Մրագիններու մեծագոյն մասն՝ զարտուղութիւններ կրած չափազանցութեամբ «Գոթականին», կրմատուած սերտ կապելու «Ծովման»ին հետ, հրապուրուած «Բիւրզանդական»ի փայլով, ինչպէս և զինթէ բուլոր զրութիւնները (systèmes) յատակազիններու և հաւասարակութիւններու արդէն պատրաստուած կազմուած են այն երկիրներու մէջ սաղմային կամթէ կատարելազործուած վիճակում, գործադրուելով Դ դարու սկիզբոց Եկեղեցու ծառայութեան համար:

Փոխանցման երեց ազդակներն են.

1°. Շուետէն իջած գերման ցեղերն: Նորա անցնում են հարաւային գերմանիայէն և կանգ առնում են Սկ ծովի ափերի վերայ, Գաղղիա, Սպանիա և Խտալիա մոնելէն առաջ: Այս բարբարունները նոխապանոյն զարդարուած, ինչպէս ցոյց տալիս են կլունիի գանձերն ի Մետալիաներու հաւացածոյն, իրանց ետերից ածում են Հայեր, որոնց հանդիպելիս են կոստանդնուպոլսում կամ փոքր Ասիայում:

2°. Կրօնաւորներ Ասորիիք և նոր կայսերութեան: Նորա հիմում են ասիական վաճառականների օգնութեամբ՝ ուժեղ զառութներ արևմուտքի ամեն նաւահանգիստներում և ներցին մեծ քաղաքներում, աստի է մի համարակառութենէն առ միւսն եղած փոխանակութիւնները:

3°. Արևմտեան ուխտաւորները: Նորա ի զարձին արևելքից բերում էին հետերնին յիշատակները հոյակապ շէնցերու՝ Երուսաղեմի, Տիեթղեհեմի և Հայկական կիլիքիայից, որտեղով անցնում էին ճանապարհին:

Ազգութանիայի, Պրովէնսի Պերիկորդի և Ավերնիայի «Ծովման» եկեղեցիներն, նոյնաթիւ կոթողներ են իրան տանող ճանապարհի վերայ: Նոյն բանը և խալիայում ենց պատահում, Թէսողորկի դամբանն Հուաէննայում, Պիզայում՝ Մկրտարանը, Միլանում՝ Ս. Լարենտիոսինը, և շատ մը բիզանտական կերտուածքների միջև կայ նաև Վենետիկի Ս. Մարկոսը, ֆոռակից ցոյր կ. Պոլոյ Ս. Ալաբելոց Եկեղեցւոյն և կենդանի հրաշալիքը աշխարհն:

Ազգամոլը (nationaliste) մեծապէս կ'անիրափ առ ըրիստոնեայն, ծածկելով անկից թէ մեր շըշանի սկզբի՝ փորձերն՝ թէ արևմտի և թէ արևելքի կողմերն, կուսմ են զրոշմ «հակա-իրապաշտ» գծուութերու զարթուամին, հակառակ յօյնա-հոռմէական «տիրող» տարազին: Ասկերչութիւն խորշակուագ, մարմարը հիւստածարնակ, կերպամներ պատկերազիր, երփնիրանգք. թարմ մարդիկ, փառաւորութեան սիրահար և մարուր երկայութեամբ, ստեղծում են իրենց ձևերը, բանում են թանգարժէց նիւթերի վրայ, առանց գլուխու բնութեան: Լումբարտացիներ, Գրանգները և մանաւանդ վիզիկութերը, մեր երկիրներու ներկայացուցիչներ են, գերազոյն վեհութեամբ, հակառակ իրենց զրութեամբ, հակառակ հազարամեայ աւանդութիւններին:

Անոնց զարդեր զրուազելու արուեստն

և արեւելցի Միանձունքների կատարելաւ-  
գործուած ուն իրար խառնուելով ինքնին  
օժանդակում են թումանիկ շինուաթեանց:

Սովորաբար կարծուում է, թէ հելքնա-  
կանութիւնը ամէն ճակատի վրայ պար-  
ապութիւն կրելով, բիւզանդիոնի մէջ զրտ-  
նուում է, ամրաւ զիջողութիւնների զնով,  
վերջին ապաւէնը, թ. Ստրէշովսկին ար-  
տաքանչէն տարուած, ինչ ինչ կէտերու  
նկատմամբ, այս կարծիքէն է բայց.

Ըստ Սուոր Սոփիայէն, Անատոլիի-  
ներէ կերտուած հոյակապ խառնածին շնո-  
րը, մինչև Պալատի եկեղեցին, յունական  
խաչի ձեռվ, կամ նոր Վասիլ Հայկանի (867-886) այսինքն մինչև Օրթողորս  
եկեղեցւոյ բացարձակ կանոնական տի-  
պարը, ամենայն կերտուածը և ամենայն  
յատակազներ, որը ծաղկեցան թագաւոր  
պապերու գաւազանի տակ, թելադրուած  
են կամ զլուի բերուած Հայաստանէն։  
Միշէնը, պատմական և հոյակապ ոնն,  
քառեակ տարածոցն, տափարակի ձեսփո-  
խութիւնն, բազմագոյնութիւնն, մէկ խօս-  
քով օրթոսորս եկեղեցւոյն բոլոր զար-  
դարանները, տարածուած այնքան լայն  
չափերով՝ արեւելքէն եկած են։

Անոր պատկերագրութիւնը՝ ըստ նիւ-  
թի, ըստ հետազողութեան, ըստ զիմագրու-  
թեան՝ Սեմականներէ ներշնչուած է, այն  
հին կայսերական թիւներին՝ որ զիգուած են  
իրարու վրայ վերին Միջագետի աս-  
տուածարանական կեղրաներում։ Արա-  
մէացից Նարատացիներու միջոցաւ հազրո-  
դակցութեան մտնելով Եզիգոտսի Պատի-  
ներու հետ, ձեռց զարնում են կերտելու  
ականաւոր պատկերագրեմ Աստուածա-  
շոնչը, յորմէ բոլոր բովանդակ Միջն  
դարը, ծծելով Անտիոքայ, Երուսաղէմի և  
բարձրագոյն կ. Պօլսի աւազանէն, անկից  
պիտի հանէ իւր ձեռերու ամրողութիւնն:

Այն մէ ցանի նշանակել նմանութիւն-  
ները Ժ. և Ժ. դարերու շինուածների

միջն, և հելքնականի հետևողութեամբ ե-  
ղած խորացանդակներն, հեռուէն երկում  
են։ Անոնց կերպարանների և զացո-  
ղութեան նշանակութիւնն տանում է հին  
դասականի հակոտնեային։ Բիւզանդական  
կազմակերպութիւնն, իսպատ ասիակա-  
նացած, մտաւ հաւասարապէս թէ արուես-  
տի և թէ քաղաքականութեան մէջ։ Մե-  
նաստանները և Սուոր Մարտութեան և  
Պանտոկրատորի աշխատանոնցները ապա-  
հովում և վերաստուգում են գրիստոնէու-  
թեան արդինաբերութիւնը։

Խաչակիրներ 1204ին կողոպտում են  
աստուածապան քաղաքը։ Այս մեծ աղէ-  
տի թուականը կարելի է նույն սկիզբն ան-  
կումի և անիշխանութեան խիսոյն դա-  
զեցաւ այնուենտե հաղորդակցութիւնը  
արեւելքի հետ։ Ճիուտոյ ծայր կու տայ  
անհատականութեան թագաւորութեանը  
այնպիսի հեղինակութեամբ, որ ոչնչ կա-  
րէ անոր առաջն առաւու Երորդ հրունէլ-  
լէսկի, Քրամանտէ, Վինեօլա, և համայնա-  
գէս Լէոնարդոյ իրենց գծագրութեանց մէջ  
զոգում են մորի աշխատանըը Արևելքի  
շինուածապետներու հետ, նոցա մորէն  
անցած չէր թէ յառաջ ցան զիրենց ճար-  
տարապետութիւնն ունեցած է մի սիրու-  
թիւնց հանձնարի եղբայրները Վերածնու-  
թեան շրջանում լրացնում են զորքը փո-  
խելով սրբազն նկարչութիւնն թէտարո-  
նական նպատակի։ Չորս զար յետոյ,  
զրագէտներու, թէկէկերի սիսալ տեղեկու-  
թիւններով լցուած, Կաթոլիկութեան ա-  
նունից հոչակում են որ «Արևելեան աղ-  
ուցութիւնը մեծ վտանգ է սպառնում զաղ-  
դիական արտեսաբն, և թէ ստիպողական  
պարտց է կուտել անոր զէմ»։ Այսպիսի-  
ներ կորուսած են մինչև անգամ այն  
զարերի յիշողութիւնը, երբ ժամանակ  
Քրիստոսի Եկեղեցին ունէր իւր արուես-  
տը։

Գլուխ Դիկիթիւնց

բրդ. Մուտի Շրուանա